ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Աշրաֆյան Նելլի Արմենի

<< Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)>> թեմայով ԺԲ.00.05 << Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք>> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Հենց սկզբից նշենք, որ ներկայացրած թեկնածուական աշխատանքի հաջողությունը պայմանավորված է նաև նրանով, որ հեղինակը երկար տարիներ աշխատելով ՀՀ դատախազության մարմինների համակարգում, գործնականում բազմիցս է շփվել քննարկվող հիմնախնդրի հետ և լիարժեք պատկերացում ունի խնդրի թե տեսական, և թե գործնական առումների նկատմամբ, ինչը նաև հնարավորություն է ընձեռվել առավել հանգամանորեն ուսումնասիրել խնդիրը, ներկայացնել պրակտիկայում առկա բարդությունները և դրանց լուծմանն ուղղված տեսական և գործնական առաջարկությունները:

Քննարկվող աշխատանքի արդիականությունը, մեր կարծիքով, պայմանավորված է հանցավորության դեմ պայքարի արդյունավետ միջոցների փնտրտուքով՝ ինչպես օրենսդրական մակարդակով, այնպես էլ կազմակերպչական առումով:

Մեր կարծիքով, տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը մասամբ համապատասխանում է հաշտարարության ինստիտուտին, որը ներկայումս ներդրվում է մի շարք երկրների քրեական դատավարության պրակտիկայում: Այս ինստիտուտների միջև ընդհանուրն այն է , որ դրանց համար առանցքային է հաշտեցումը: Տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը արդիական է քրեական և քրեադատավարական օրենսդրության զարգացման ժամանակակից միտումներին և ձևավորված քրեական քաղաքականության դրույթներին:

Գրախոսվող աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել տուժողի հետ հաշտվելու կապակցությամբ քրեական պատասխանատվությունից ազատելու

ինստիտուտի համալիր խնդիրները՝ քրեական օրենսդրության հումանիզացման և խրախուսման մեթոդի կիրառման հնարավորություններն ընդլայնելու համատեքստում, որպես քրեական-իրավական կարգավորումների համար ավանդական իմպերատիվ մեթոդի այլընտրանք:

Դրված նպատակին համապատասխան, հեղինակը իր առջև դրել էր հետևյալ խնդիրների լուծման անհրաժեշտությունը.

- Վերլուծել հաշտեցման ինստիտուտի իրավակարգավորումները արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում,
- Հետազոտել խրախուսման առանձնահատկությունները քրեական օրենսդրությունում
- Բացահայտել հաշտության ինստիտուտի էությունը և դրսևորման առանձնահատկությունները քրեական իրավունքում և այլն:

Քննարկվող ատենախոսական աշխատանքի ուսումնասիրությունից, կարելի է եզրակացնել , որ հեղինակը պատշաճ գիտական խորությամբ է լուծել իր առջև դրված խնդիրները, իսկ հետազոտության շնորհիվ ձևակերպված հետևությունները և առաջարկությունները արժանահավատ են և գիտականորեն հիմնավորված:

Աշխատանքի գիտական նորույթը արտացոլված է բուն բովանդակության մեջ, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենդրական փոփոխություններին առնչվող գործնական բնույթի առաջարկություններում: Բացի այդ մշակված առաջարկությունները կարող են հաշվի առնվել նաև մեզանում իրականացվող դատաիրավական բարեփոխությունների առումով:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրած մասնագիտությանը:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակված ութ հոդվածները լիարժեք արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոնշվածի հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ աշխատանքը զերծ չէ որոշակի բացթողումներից և անհստակություններից, որոնք հանգում են հետևյալին.

1.Աշխատանքի առաջին գլխի 2-րդ ենթագլխում խոսելով արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության հաշտվելու վերաբերյալ փորձի մասին, մեր կարծիքով, հեղինակը շեշտադրումը պետք է դներ ԱՊՀ երկրների քրեական օրենսդրության և պրակտիկայի վրա, քանի որ այդ երկրների և Հայաստանի խնդիրները քննարկվող հարցի վերաբերյալ գրեթե չեն

տարբերվում և հետևաբար արդյունքը գործնական տեսանկյունից ավելի շահեկան կլիներ:

2. Աշխատանքի երկրորդ գլխի 2-րդ ենթագլխում հեղինակը ուշադրությունը առավելապես կապում է քրեական իրավունքում խրախուսման էութենական կողմի վրա, այն ինչ մեր կարծիքով ամենևին էլ չժխտելով խրախուսման էութենական կողմի նշանակությունը, այնուհանդերձ առաջնահերթությունը պետք է տրվի խրախուսման սոցիալ- իրավական և բարոյահոգեբանական կողմերի վրա, որոնք առավել առարկայական են և շոշափելի:

3.Աշխատանքում տեղ են գտել նաև խմբագրական և ոճաբանական բնույթի անճշտություններ ու բացթողումներ, որոնք կրում են սահմանափակ բնույթ:

Այնուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ նշված նկատառումներն ունեն մասնակի և խորհրդատվական բնույթ և բնավ չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի և արժանիքների վրա:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Նելլի Արմենի Աշրաֆյանի <<Քրեական պատասխանատվությունից ազատվելու տեսական և գործնական հիմնախնդիրները (տուժողի հետ հաշտվելու հիմքով)>> թեկնածուական ատենախոսությունը իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող, ավարտուն ու ամբողջական հետազոտություն, որը լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի <<Կանոնակարգի>> պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ իրավաբանական գիտությունների թեկնածու՝
Գ.Ա.Ալոյան

Գ.Ա.Ալոյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ գլխավոր դատախազության վարչության աջակցող բաժնի պետ՝
Ա.Եգանյան